

## **Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր ԱՆ ՊԱԳ-ԾՁԲ-179**

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ԵՎ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ  
ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

## **ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ**

ԵՎ

### **ԳԵՂԱԿԵՐՏԻ ԲԱ ՀՈԱԿ-Ի**

(իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ)

ՄԻՋԵՎ

## **առողջապահության նախարարությունը,**

(այսուհետ՝ Պատվիրատու)

որպես բժշկական օգնության և սպասարկման պետական պատվեր տեղադրող, մի կողմից՝ ի դեմս առողջապահության նախարարության գլխավոր քարտուղարի պարտականություններ կատարող՝ Վահե Հակոբյանի, որը գործում է առողջապահության նախարարության կանոնադրության հիման վրա և

## **Գեղակերտի ԲԱ ՀՈԱԿ-ը (լիցենզիա\*)**

(այսուհետ՝ Կատարող)

ի դեմս տնօրեն՝ Աննա Հակոբյանի, որը գործում է Գեղակերտի ԲԱ ՀՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա (միայն իրավաբանական անձանց դեպքում), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## **I. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1. Պատվիրատուն հանձնարարում, իսկ Կատարողը պարտավորվում է առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում ցուցաբերել պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում (այսուհետ՝ Բուժօգնություն) օրենսդրությամբ նախատեսված դեպքերում դրա իրավունքը ունեցող անձանց՝ Պատվիրատուի կողմից թույլատրված Բուժօգնության տեսակների գծով, սույն պայմանագրի հավելված 1-ով սահմանված ծառայություններով և գներով, սույն պայմանագրի հավելված 2-ով սահմանված պայմանագրային գումարի շրջանակներում:

## **II. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

### **2.1. Կատարողն իրավունք ունի.**

- 2.1.1. սույն պայմանագրով սահմանված կարգով ստանալ փոխհատուցում սույն պայմանագրի պայմաններին համապատասխան ծավալով և որակով մատուցված Բուժօգնության համար,
- 2.1.2. անհրաժեշտության դեպքում հիմնավորել Պատվիրատուին ներկայացված Բուժօգնության վերաբերյալ հաշվետվությունների արժանահավատությունը՝ լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու միջոցով,
- 2.1.3. հերթագրման ոչ ենթակա դեպքերում Բուժօգնության պայմանագրային ծավալների ամսական համամասնությունների գերակատարման հետևանքով հաշվետու ժամանակահատվածում չներկայացված հաշվետվությունները ներկայացնել Պատվիրատուին փոխհատուցման՝ սույն պայմանագրով հաստատված պայմանագրային գումարի շրջանակներում,
- 2.1.4. ներկա գտնվել Պատվիրատուի կողմից բժշկական կազմակերպությունում իրականացվող դիտարկումներին, մշտադիտարկումներին, ուսումնասիրություններին, փորձագիտական գործունեությանը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով բողոքարկել Պատվիրատուի գործողությունները,
- 2.1.5. օգտվել ոլորտը կարգավորող իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներից:

### **2.2. Կատարողը պարտավոր է.**

- 2.2.1. Բուժօգնությունն իրականացնել ոլորտը կարգավորող օրենքներին, որոշումներին և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի (այսուհետ՝ Նախարար) անհատական և նորմատիվ հրամաններին համապատասխան,

2.2.2. յուրաքանչյուր ամսվա համար մինչև այդ ամսվան հաջորդող ամսվա 2-րդ աշխատանքային օրվա աշխատանքային ժամի ավարտը (դեկտեմբեր ամսվա համար մինչև դեկտեմբերի 15-ին հաջորդող 2-րդ աշխատանքային օրվա աշխատանքային ժամի ավարտը) էլեկտրանային առողջապահության համակարգի միջոցով ամփոփել և ներկայացնել Բուժօգնության շրջանակներում կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններ (նախարարի 24.01.2011թ-ի N 63-Ա հրամանով հաստատված «Պետական պատվերի շրջանակներում կատարված աշխատանքներն ըստ բյուջետային ծրագրերի և բժշկական ծառայությունների տեսակների» հաշվետվությունը /Ձև N HP-011/ և /Ձև N SC-011/) պայմանագրային գումարի ամսական համամասնությունների ծավալներին համապատասխան՝ սույն պայմանագրի 5-րդ հավելվածով սահմանված չափաքանակների շրջանակներում, հավելված 2-ով նշված ծրագրերին համապատասխան առանձին ընդունման-հանձնման արձանագրություններ և հաշվարկային փաստաթղթեր, ինչպես նաև իր կողմից իրականացվող գործունեության վերաբերյալ նախարարի կողմից և այլ իրավական ակտերով սահմանված հաշվետվություններ, ձևեր և տեղեկանքներ,

---

\* Կ-XX-000897 տրված 29/12/2006թ-ին:

2.2.3. ապահովել սույն պայմանագրին կից «Ծառայությունների մատուցման պայմանները» (հավելված 3),

2.2.4. Պատվիրատուի կողմից էլ. առողջապահական համակարգի տվյալների փոխանցումն ապահովող ցանցի (data network) ներդրման դեպքում 14 օրյա ժամկետում միանալ տվյալ ցանցին՝ միևնույն ժամանակ ունենալով էլ. առողջապահական համակարգի տվյալների փոխանցման ցանցը սպասարկող մատակարարից տարբերվող այլ մատակարարի կողմից մատուցվող պահուստային կապուղի՝ ապահովելով 10 օգտատիրոջ հաշվով 2 մբ/վ սիմետրիկ ինտերնետ սնուցում,

2.2.5. ապահովել սույն պայմանագրի շրջանակներում իրականացվող Բուժօգնության մասին տեղեկատվության հրապարակայնությունը, այդ թվում՝ բնակչության համար տեսանելի վայրում տեղադրելով համապատասխան տեղեկատվություն Բուժօգնության տրամադրման հետ կապված հարցերի կամ բողոքների ներկայացման կարգի Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման մասին» թիվ 318-Ն որոշմամբ հաստատված բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 1717-Ն որոշմամբ հաստատված բնակչության սոցիալական խմբերի և այն հիվանդությունների ցանկերի, որոնց դեպքում դեղերը հատկացվում են անվճար կամ արտոնյալ պայմաններով, Նախարարի հրամաններով հաստատված «Հիմնական դեղերի ցանկի», հատուկ և դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների ցանկերի և սահմանված արտոնությունների մասին,

2.2.6. պացիենտի հետ կնքել Նախարարի 2011 թվականի փետրվարի 4-ի թիվ 12-Ա և 2011 թվականի փետրվարի 1-ի թիվ 104-Ա հրամաններով հաստատված համավճարային կամ վճարովի հիմունքներով հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման համապատասխան պայմանագիր,

2.2.7. ապահովել պետության կողմից երաշխավորված անվճար Բուժօգնություն ստացող անձանց իրազեկման թերթիկի լրացումը և տրամադրումը պացիենտներին՝ համաձայն Նախարարի 2013 թվականի դեկտեմբերի 18-ի N 3274-Ա հրամանով հաստատված կարգի,

2.2.8. ապահովել գոյացած ֆինանսական միջոցների արդյունավետ և նպատակային օգտագործումը՝ պահպանելով ծախսերի իրականացման հետևյալ առաջնահերթությունները.

2.2.8.1. աշխատավարձ,

2.2.8.2. հարկային պարտավորություններ,

2.2.8.3. դեղերի և բժշկական նշանակության ապրանքների գնում,

2.2.8.4. այլ ծախսեր,

2.2.9. սահմանել աշխատողների աշխատավարձը, այդ թվում՝ ըստ բուժաշխատողների տարբեր կատեգորիաների աշխատավարձի նվազագույն ամսական չափերը, Նախարարի հրամաններով հաստատված՝ աշխատողների աշխատանքի վարձատրության հաշվարկման և վճարման չափորոշիչներին համապատասխան,

2.2.10. ապահովել Պատվիրատուի կողմից սահմանված կարգով և հաստատված ձևերով իրականացվող Բուժօգնության հաշվառումը, գրանցումը, մուտքագրումը էլեկտրոնային առողջապահության համակարգ՝ սահմանված ժամկետներում և տեխնիկական չափանիշներին համապատասխան, ինչպես նաև ապահովել էլեկտրոնային առողջապահության համակարգի սպասարկումը սեփական միջոցներով,

2.2.11. դեպքերի անհատական վարում իրականացնելու նպատակով (case management) Նախարարի կողմից հաստատված ծրագրերի կամ ծառայությունների մասով ապահովել հաճախորդների այցելությունների, բժշկական միջամտությունների, մատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղեկատվության մուտքագրումը էլեկտրոնային առողջապահության համակարգ դրանց փաստացի կատարման պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում,

2.2.12. ապահովել առնվազն բժիշկների, միջին բուժանձնակազմի, ինչպես նաև էլեկտրոնային առողջապահության համակարգից օգտվող վարչատնտեսական անձնակազմի նույնականացման քարտերի առկայությունը,

2.2.13. ապահովել հետևյալ տվյալների մուտքագրումը էլեկտրոնային առողջապահության համակարգ՝

2.2.13.1. բժշկական և վարչական անձնակազմի անհատական և կոնտակտային տվյալներ,

2.2.13.2. անձնակազմի պաշտոնների և կառուցվածքի վերաբերյալ տվյալներ,

2.2.13.3. բժշկական անձնակազմի աշխատանքային և ոչ աշխատանքային ժամերի վերաբերյալ տվյալներ,

2.2.13.4. բժշկական կազմակերպությունում առկա բժշկական սարքավորումների վերաբերյալ տվյալներ,

2.2.13.5. բժշկական կազմակերպության տվյալները (այդ թվում՝ անվանում, հեռախոս, հասցե, ՀՎՀՀ, պատասխանատուի վերաբերյալ անհատական տվյալներ և այլն),

2.2.13.6. բժշկական կազմակերպության ղեկավարի անհատական և կոնտակտային տվյալները,

2.2.13.7. պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով մատուցվող բոլոր բժշկական ծառայությունների վերաբերյալ տեղեկատվությունը (այդ թվում՝ նաև առանձին դեպքերով չֆինանսավորվող այցերի մասով)՝ համաձայն էլեկտրոնային առողջապահության համակարգում սահմանված ձևի,

- 2.2.13.8. այլ տվյալներ՝ համաձայն էլեկտրոնային առողջապահության համակարգում պահանջվող տվյալներ,
- 2.2.14. ապահովել սույն պայմանագրի 2.2.13. կետում նշված յուրաքանչյուր տվյալի փոփոխության դեպքում մեկ աշխատանքային օրվա ընթացքում դրանց թարմացումը էլեկտրոնային առողջապահության համակարգում,
- 2.2.15. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իր իրավասության սահմաններում ապահովել էլեկտրոնային առողջապահության համակարգից մշակվող տեղեկատվության գաղտնիությունը,
- 2.2.16. ապահովել ներկայացված հաշվետվությունների տվյալների իսկությունը և արժանահավատությունը, որի համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ինքն է կրում պատասխանատվություն,
- 2.2.17. նախքան դեղերի և բժշկական նշանակության ապրանքների գնման պլանները և հայտարարությունները հրապարակվելը Պատվիրատուի պահանջով դրանք տրամադրել Պատվիրատուին,
- 2.2.18. պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերությունների համար՝ ապահովել ընկերության տարեկան զարգացման ծրագրով սահմանված ցուցանիշների, այդ թվում՝ շահութաբերության ապահովման կատարումը,
- 2.2.19. պայմանագրի գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին անհապաղ գրավոր տեղեկացնել Պատվիրատուին,
- 2.2.20. Պատվիրատուի կողմից դիտարկում, մշտադիտարկում, ուսումնասիրություն, փորձագիտական գնահատում իրականացնելու ամբողջ ընթացքում ապահովել Պատվիրատուին անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի և այլ տեղեկատվության ներկայացումը, ապահովել համապատասխան մասնագետների համար աշխատանքային պայմաններ, օժանդակել աշխատանքները ժամանակին և լիարժեք կատարելու հարցում,
- 2.2.21. ապահովել սույն պայմանագրի գաղտնի հավելված 4-ով սահմանված դրույթների կատարումը, ինչպես նաև այդ դրույթների կատարման հիմքով իրեն հայտնի դարձած, օրենքով պաշտպանվող կամ այլ տեղեկությունների գաղտնիությունը,
- 2.2.22. Պատվիրատուի կողմից սահմանված ընթացակարգով ապահովել բուժաշխատողների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների գնահատմանն ուղղված կազմակերպչական աշխատանքները, ինչպես նաև ընթացք տալ (իրագործել) գնահատման արդյունքների հիման վրա բուժաշխատողների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման և աշխատողների աշխատանքային գործունեության վերաբերյալ Պատվիրատուի ներկայացրած առաջարկություններին,
- 2.2.23. սույն պայմանագրի հավելված 2-ով նախատեսված՝ 200,0 մլն ՀՀ դրամը գերազանցող կազմակերպությունը մինչև օգոստոսի 31-ը ապահովում է անկախ աուդիտորի կողմից հաստատված նախորդ տարվա ֆինանսական հաշվետվություններ և աուդիտորական եզրակացություն: Ընդ որում, սույն պայմանագրի հավելված 2-ով նախատեսված 1000,0 մլն դրամը գերազանցող կազմակերպությունների կողմից ընտրված աուդիտ իրականացնող կազմակերպությունը պետք է բավարարի սույն պայմանագրի հավելված 6-ով նախատեսված պայմաններին,
- 2.2.24. Հայաստանի Հանրապետության 2004 թվականի մարտի 4-ի թիվ 318-Ն որոշմամբ սահմանված կարգով բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց Բուժօգնության համար քվոտաների շրջանակներում տրամադրված ուղեգրերի վերաբերյալ հանձնաժողով ձևավորող բժշկական կազմակերպությունները Նախարարի կողմից սահմանված կարգով ներկայացնել հաշվետվություն առողջապահության նախարարություն,
- 2.2.25. Պատվիրատուի կողմից պահանջ ներկայացնելուց հետո 15-օրյա ժամկետում տրամադրել վերջին 2 տարիների ընթացքում պետական պատվերի պայմանագրի շրջանակներում իր կողմից դուրս գրած դեղատոմսերի պատճենները,
- 2.2.26. կատարել Բուժօգնության ոլորտը կարգավորող իրավական ակտերով սահմանված այլ պարտականություններ:

### 2.3. Պատվիրատուն իրավունք ունի.

2.3.1. սույն պայմանագրի համաձայն, իրականացնել դիտարկումներ, մշտադիտարկումներ, ուսումնասիրություններ, փորձագիտական գնահատում Կատարողի կողմից Բուժօգնության կատարման ընթացքի, Նախարարի կողմից հաստատված չափորոշիչներով և Պայմանագրով սահմանված ծավալների, որակի, Կատարողի գործունեությունը բնութագրող տեղեկատվության արժանահավատության և ստացված ֆինանսական միջոցների արդյունավետ ու նպատակային օգտագործման ճշտության և իրավական ակտերով սահմանված պահանջների կատարման և պահպանման վերաբերյալ, սահմանել հայտնաբերված թերությունները սեփական միջոցներով վերացնելու ողջամիտ ժամկետ,

2.3.2. հիվանդանոցային Բուժօգնության մասով իրականացնել Բուժօգնության ընթացիկ մշտադիտարկման աշխատանքներ՝ տվյալ բժշկական կազմակերպությանը կցագրված Պատվիրատուի ներկայացուցիչների միջոցով, որոնց իրավասությունների շրջանակը և կցագրումները ըստ բժշկական կազմակերպությունների հաստատվում են Նախարարի հրամանով,

2.3.3. պայմանագրով նախատեսված աշխատանքների ուսումնասիրության, դիտարկման, մշտադիտարկման, փորձագիտական գնահատման արդյունքներով հայտնաբերված թերությունները վկայակոչելու և դրանց հետ կապված պահանջներ ներկայացնելու՝ աշխատանքն ընդունելուց հետո մինչև երեք տարվա ընթացքում: Սույն կետը կիրառվում է նաև կողմերի միջև մինչև սույն պայմանագրի կնքումը ծագած հարաբերությունների նկատմամբ՝ կապված նախորդ երկու տարիների ընթացքում պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների ձեռքբերման հետ,

2.3.4. ամբողջությամբ կամ մասնակի չֆինանսավորել դեպքերի անհատական վարման (case management), մշտադիտարկման, դիտարկման կամ ուսումնասիրություն իրականացնելու ընթացքում հայտնաբերված՝

2.3.4.1. Բուժօգնության այն ծավալները, որոնք ըստ Կատարողի կողմից էլեկտրոնային առողջապահության համակարգի միջոցով ներկայացված հաշվետվությունների՝ պացիենտին մատուցվել են ամբողջությամբ կամ մասնակիորեն ոչ պատշաճ ծավալի և որակի,

2.3.4.2. պացիենտի ախտորոշմանը չհամապատասխանող լաբորատոր-գործիքային հետազոտություններով կամ բուժման պլանով կամ բժշկի կողմից նշանակված դեղերով բժշկական օգնության մատուցման դեպքերը,

2.3.4.3. ոլորտը կարգավորող իրավական ակտերի դրույթների չպահպանման դեպքերում,

2.3.5. առողջության առաջնային պահպանում իրականացնող կազմակերպություններում Նախարարի կողմից սահմանված Բուժօգնության որակի չափանիշները և ցուցանիշները չհապահովելու դեպքում Կատարողի կողմից կատարված փաստացի աշխատանքների ծավալներում իրականացնել նվազեցումներ Նախարարի կողմից սահմանված կարգով,

2.3.6. Կատարողի կողմից սույն պայմանագրով սահմանված միևնույն դրույթը պայմանագրի գործողության ժամկետում կրկնակի խախտելու դեպքում՝

2.3.6.1. կիրառել սույն պայմանագրով նախատեսված տույժեր, տուգանքներ և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության այլ միջոցներ,

2.3.6.2. միակողմանի լուծել պայմանագիրը՝ հաշվի առնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 780-րդ հոդվածը,

2.3.7. այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև սույն պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով Պայմանագիրը լուծվել է:

2.3.8. միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողը էականորեն խախտել է սույն պայմանագրի դրույթները: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

2.3.8.1. մատուցված ծառայությունները չեն համապատասխանում սույն պայմանագրով սահմանված պահանջներին,

2.3.8.2. խախտվել են ծառայությունների մատուցման ժամկետները,

2.3.9. պահանջել պայմանագրով նախատեսված տույժերի<sup>է7</sup> և տուգանքների վճարում,

2.3.10. պահանջել և 15-օրյա ժամկետում ստանալ Կատարողի կողմից վերջին 2 տարիների ընթացքում պայմանագրի շրջանակներում իր կողմից դուրս գրած դեղատոմսերի պատճենները,

2.3.11. կրել Բուժօգնության ոլորտը կարգավորող իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներ:

## **2.4. Պատվիրատուն պարտավոր է.**

2.4.1. իրավական ակտերով սահմանված ժամկետներում ընդունել և ամփոփել Կատարողի կողմից իրականացված Բուժօգնության վերաբերյալ ներկայացված հաշվետվությունները և ներկայացնել վճարման,

2.4.2. սահմանված կարգով ապահովել ֆինանսավորման համար անհրաժեշտ փաստաթղթերի մուտքագրումը և այլ անհրաժեշտ գործողությունների կատարումը՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 15-ը, իսկ դեկտեմբեր ամսվա առաջին կեսի համար՝ մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը՝ Կատարողի կողմից սույն պայմանագրի 2.2.2. կետով սահմանված ժամկետների պահպանման պայմանով,

2.4.3. կատարողին ցուցաբերել անհրաժեշտ կազմակերպամեթոդական օժանդակություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) պաշտոնական կայք-էջում ստեղծել հատուկ դարան և տեղադրել պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման ոլորտը կարգավորող իրավական ակտերը,

2.4.4. վճարումներ իրականացնելիս՝ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում ապահովել Կատարողի նկատմամբ տույժերի և տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը,

2.4.5. եթե պատվիրատուն պայմանագրով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված, և պայմանագրով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը պատվիրատուն պայմանագրի կողմին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում, պայմանագրի արդյունքը պատվիրատուին հանձնելու փաստն ամրագրվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը (էլեկտրոնային հասցեով հանձնելու դեպքում հիմք է ընդունվում ուղարկման ամսաթիվը),

2.4.6. Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից,

2.4.7. կատարել ոլորտը կարգավորող իրավական ակտերով սահմանված այլ պարտականություններ:

### **III. ՎԵՐԱՀՍԿՈՒՄ**

3.1. Կատարողի կողմից սույն պայմանագրի շրջանակներում մատուցված կամ մատուցվող ծառայությունների որակի և ծավալի համապատասխանության գնահատումը սույն պայմանագրի պահանջներին իրականացվում է՝

3.1.1. ՀՀ օրենսդրությամբ և Նախարարի հրամանով հաստատված ընթացակարգով՝ մշտադիտակումների, դիտարկումների, ուսումնասիրությունների, դեպքերի անհատական վարման (case management) միջոցով,

3.1.2. Կատարողի կողմից դեղերի և բժշկական նշանակության ապրանքների գնման նպատակով կնքված պայմանագրերի, ինչպես նաև գնման գործընթացների ընտրանքային մշտադիտարկում իրականացնելու միջոցով, այդ թվում՝ Կատարողից այդ գործարքներին առնչվող բոլոր փաստաթղթերը պահանջելով և ստանալով, ինչպես նաև մշտադիտարկման արդյունքներով բացահայտված խնդիրների շտկման նպատակով համապատասխան գործողություններ իրականացնելով՝ նախապես համաձայնեցնելով ՀՀ ֆինանսների նախարարության հետ (վերաբերվում է միայն 50% և ավելի պետական մասնակցությամբ առևտրային և պետական ոչ առևտրային կազմակերպություններին):

### **IV. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

4.1. Սույն պայմանագրով Կատարողի ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պայմանագրով սահմանվում են տույժեր և տուգանքներ: Տուգանքի չափը չի կարող պակաս լինել պայմանագրի գնի 0,5 տոկոսից, իսկ տույժերի չափը՝ 0,05 տոկոսից: Ընդ որում, տույժը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ, իսկ տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:

4.2. Պարտավորությունների ոչ պատշաճ կատարում է համարվում նաև՝

4.2.1. եթե Կատարողի կողմից էլեկտրոնային առողջապահության համակարգ մուտքարված տվյալներում յուրաքանչյուր ծրագրի մասով հայտնաբերված թերությունների, անճշտությունների կամ ոչ արժանահավատ դեպքերի թիվը ամսական կտրվածքով կազմում է ներկայացված հաշվետվությունների 5 տոկոսը կամ ավելին,

4.2.2. Կատարողի կողմից սույն պայմանագրով նախատեսված Բուժօգնության ծավալները ոչ ամբողջությամբ կամ մասնակի կամ ոչ պատշաճ որակի Բուժօգնության տրամադրումը՝ Պատվիրատուի կողմից Կատարողին սույն պայմանագրի գործողության ընթացքում առնվազն մեկ անգամ գրավոր տեղեկացրել է նախազգուշացնելուց հետո նույն խախտումը կրկնվելու կամ այն չվերացնելու դեպքում,

4.3. սույն պայմանագրով հաշվետվությունների ներկայացման ժամկետները խախտելու դեպքում Կատարողից ուշացման յուրաքանչյուր օրվա համար գանձվում է տույժ՝ հաշվետու ժամանակահատվածում ներկայացման ենթակա կատարողականի արժեքի 0,05%-ի չափով,

4.4. Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 2.4.2. կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով,

4.5. Կատարողը սահմանված կարգով և չափերով պատասխանատվություն է կրում նաև սույն պայմանագրի 3-րդ հավելվածում՝ «Ծառայությունների մատուցման պայմաններում» նշված պարտավորությունների չկատարման համար,

4.6. սույն պայմանագրի շրջանակներում մշտադիտարկումների, դիտարկումների, ուսումնասիրությունների, դեպքերի անհատական վարման միջոցով հայտնաբերված այն խախտումների գումարը, որոնք կատարվել են սույն պայմանագրի գործողության ժամանակահատվածում, Պատվիրատուն պակասեցնում է Կատարողի ընթացիկ տարվա փաստացի աշխատանքների ծավալից, իսկ սույն պայմանագրի գործողության ժամանակահատվածից դուրս հայտնաբերված խախտումների արձանագրված գումարը փոխանցվում է ՀՀ պետական բյուջեի համապատասխան հաշիվներին,

4.7. Պատվիրատուի կողմից հայտնաբերված խախտումների ճշտումը չի ազատում Կատարողին իր պարտավորությունները ոչ պատշաճ կատարելու համար ՀՀ օրենսդրությամբ և սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվությունից,

4.8. տուգանքի և տույժի վճարումը Պատվիրատուին և Կատարողին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները ամբողջությամբ կատարելու կամ խախտումները վերացնելու պարտականությունից,

4.9. սույն պայմանագրի շրջանակում նախատեսված տուգանքները և տույժերը հաշվարկվում և վճարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.10. սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում Պատվիրատուին և Կատարողին իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

## **V. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

5.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե եղել է անհաղթահարելի ուժի ազդեցություն, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## **VI. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ**

6.1. Սույն պայմանագիրը կարող է լուծվել, եթե կողմերը կամ լուծարվել, կամ վերակազմակերպվել, կամ սնանկ են ճանաչվել՝ հատուցելով կողմերի կատարած ծախսերը,

6.2. Սույն պայմանագիրը կարող է լուծվել 2.3.8. և 5.1 կետերով նախատեսված դեպքերում,

6.3. Սույն պայմանագիրը կարող է միակողմանի լուծվել՝ 7.2 կետում նշված համաձայնագրի կնքումից Կատարողի հրաժարման դեպքում,

6.4. ՀՀ օրենսդրությամբ կամ սույն պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

## **VII. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

7.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 31.12.2019 թվականը: Պայմանագրի պայմանները կիրառվում են 2018թ. դեկտեմբերի 15-ից մինչև պայմանագիր կնքելը, բայց ոչ ուշ, քան 2019թ. հունվարի 31-ը կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում մինչև պայմանագիր կնքվելը Կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումը իրականացվում է Պայմանագիրը սույն կետի համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

7.2. Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ (պետական պատվերի շրջանակներում իրականացվող բժշկական օգնության տեսակների նորմատիվներում և գներում, Կատարողի պայմանագրային գումարներում Նախարարի համապատասխան հրամաններով իրականացվող փոփոխությունները և լրացումները) կարող են կատարվել համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.3. Սույն պայմանագրի փոփոխման կամ լուծման դեպքում տվյալ պահին բուժումը դեռ չավարտած պացիենտների բուժման հետագա փոխհատուցումը իրականացնելու նպատակով, Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում պակասեցման ենթակա ծառայության մասով բուժումը շարունակող պացիենտների ցանկը և հիվանդության պատմագրերի համարները:

7.4. Կողմերի միջև վեճերը լուծվում են Կողմերի բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.5. Սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում, արգելվում է կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայությունների ծավալների կամ, ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

7.6. Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.7. Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը: Ընդ որում, արգելվում է միևնույն բյուջետային տարվա ընթացքում նույն ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման նպատակով նախատեսել ֆինանսական միջոցներ:

7.8. Սույն պայմանագրից ծագած Կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի առանց պարտապան Կողմի (ֆինանսների նախարարության) գրավոր համաձայնության:

7.8.1. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ առաջացնող գնումների դեպքում պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է այդ գործարքի՝ լիազորված մարմնի կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.9. Սույն պայմանագիրը և նրան կից հավելվածները կազմված են հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից, որոնցից մեկը գտնվում է Պատվիրատուի, մյուսը՝ Կատարողի մոտ՝ բացառությամբ գաղտնի հավելված 4-ի:

## VIII. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Առողջապահության նախարարություն

### ԿԱՏԱՐՈՂ

Գեղակերտի ԲԱ ՀՈԱԿ

Հասցե Երևան, Կառավարական տուն 3

Հասցե գ. Գեղակերտ Մաշտոց 36

Սպասարկող ԳՆ գործառնական վարչություն  
բանկ

Սպասարկող Արդշինբանկ ՓԲԸ Էջմիածնի մ/6  
բանկ

Բանկային 900011105013

Բանկային 247591428898

հաշիվ

հաշիվ

ՀՎՀՀ 02507171

ՀՎՀՀ

04708885

ԱՆ գլխավոր քարտուղարի պարտականություններ  
կատարող՝  
Վահե Հակոբյան

Տնօրեն՝

Աննա Հակոբյան

---

/ստորագրություն/

« 29 » հունվարի 2019 թ

Հեռ: +37460808003

Ֆաքս:

E-mail: [info@moh.am](mailto:info@moh.am)

---

/ստորագրություն/

« 29 » հունվարի 2019 թ

Հեռ: +37493594062

Ֆաքս:

E-mail: [anna-hakobyan75@mail.ru](mailto:anna-hakobyan75@mail.ru)

ՑԱՆԿ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ԵՎ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ և ՍՊԱՍԱՐԿՄԱՆ  
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԹՈՒՅԼԱՏՐՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԳՆԵՐԻ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ  
ԳԵՂԱԿԵՐՏԻ ԲԱ ՀՈԱԿ

(տարածաշրջանի և բժշկական կազմակերպության անվանումը)

| Ծառայության կոդը | Բժշկական օգնության և սպասարկման տեսակը և ծառայությունը                                                          | Չափման միավորը | Միավորի գինը (դրամ) | Միավորի օրական գինը (դրամ) |
|------------------|-----------------------------------------------------------------------------------------------------------------|----------------|---------------------|----------------------------|
| <b>1.5</b>       | <b>Ընտանեկան բժշկություն</b>                                                                                    |                |                     |                            |
| 0711006          | Մեծահասակների առողջության առաջնային պահպանում ընտանեկան բժշկի կողմից՝ նորմալ պայմաններում (ԱԱՊ+ներդ+լաբ)        | ԱՆՁ            | 11.1123             |                            |
| 0711010          | Երեխաների առողջության առաջնային պահպանում ընտանեկան բժշկի կողմից՝ նորմալ պայմաններում (ԱԱՊ+ներդ+լաբ)            | ԱՆՁ            | 20.4876             |                            |
| 0711014          | ԱԱՊ բուժքույրերի կողմից ԲՄԿ-ներում (յուրաքանչյուր բուժքրոջ հաշվով)                                              | ԲՈՒԺՔՈՒՅՐ      | 98875               |                            |
| 0711017          | Երեխաների բժշկական օգնություն և սպասարկում դպրոցներում                                                          | ԱՆՁ            | 177.5               |                            |
| 0711032          | Ընտանեկան բժշկի կողմից իրականացվող մանկաբարձագինեկոլոգիական բուժօգնություն                                      | ԱՆՁ            | 1.1301              |                            |
| 0711033          | Ընտանեկան բժշկի կողմից ներ մասնագետների մոտ խորհրդատվության ուղեգրում                                           | ՀԱՃԱԽՈՒՄ       | 2000                |                            |
| 0711038          | Ընտանեկան բժշկի կողմից իրականացվող հղիների հսկողություն                                                         | ՀՂԻ            | 52.459              |                            |
| 0771900          | Անվճար և արտոնյալ պայմաններով դեղորայքի տրամադրում (ընտ.)երեխա                                                  | ԴՐԱՄ           | 1                   |                            |
| 0777010          | Արյան խմբի որոշում                                                                                              | ՀԵՏԱՁՆՏ.       | 1050                |                            |
| 0777020          | Ռեզուս գործոնի որոշում                                                                                          | ՀԵՏԱՁՆՏ.       | 1050                |                            |
| 0777025          | ՄԻԱՎ-ի (ԹԼՃ) հետազոտություն                                                                                     | ՀԵՏԱՁՆՏ.       | 1450                |                            |
| 0777026          | ՄԻԱՎ-ի հետ. համար արյան հավաքագրում և տեղափոխում                                                                | ՀԵՏԱՁՆՏ.       | 230                 |                            |
| 0777030          | Հեպատիտ B, Հեպատիտ C (յուրաքանչյուր մեկ հետազոտություն)                                                         | ՀԵՏԱՁՆՏ.       | 1650                |                            |
| 0777040          | Ռեակցիա ТРНА                                                                                                    | ՀԵՏԱՁՆՏ.       | 1900                |                            |
| 0777050          | Ռեակցիա VDRL                                                                                                    | ՀԵՏԱՁՆՏ.       | 1300                |                            |
| 0777060          | Ռեակցիա MRP                                                                                                     | ՀԵՏԱՁՆՏ.       | 1050                |                            |
| 0777070          | Վասերմանի ռեակցիա (RW)                                                                                          | ՀԵՏԱՁՆՏ.       | 1050                |                            |
| 0777080          | Սնկերի և գոնոկոկերի բակտերիոլոգիական քննություն                                                                 | ՀԵՏԱՁՆՏ.       | 1650                |                            |
| 0777090          | Պարագիտար հիվանդությունների բակտերիոսկոպիկ քննություն արյան մեջ                                                 | ՀԵՏԱՁՆՏ.       | 1450                |                            |
| 0777100          | Ռենտգենոգրաֆիա մեկ նկար (ժապավեն 30X40)                                                                         | ՀԵՏԱՁՆՏ.       | 2900                |                            |
| 0777101          | Ռենտգենոգրաֆիա մեկ նկար /ժապավեն 24x30/                                                                         | ՀԵՏԱՁՆՏ.       | 2600                |                            |
| 0777102          | Ռենտգենոգրաֆիա մեկ նկար /ժապավեն 18x24/                                                                         | ՀԵՏԱՁՆՏ.       | 2500                |                            |
| 0777103          | Ռենտգենոգրաֆիա մեկ նկար /ժապավեն 13x18/                                                                         | ՀԵՏԱՁՆՏ.       | 2300                |                            |
| 0777110          | Ռենտգենոսկոպիա (մեկ հետազոտություն)                                                                             | ՀԵՏԱՁՆՏ.       | 2200                |                            |
| 0777120          | Ֆլյուորոգրաֆիա (մեկ անձ)                                                                                        | ՀԵՏԱՁՆՏ.       | 1900                |                            |
| 0777130          | Ֆիզիոթերապիա (մեկ սեսիա)՝ 1 անձի համար ոչ ավել քան 10000 դրամ                                                   | ՍԵՆՆՍ          | 1150                |                            |
| 0777140          | Բակտերիոլոգիական հետազոտություն                                                                                 | ՀԵՏԱՁՆՏ.       | 1500                |                            |
| 0777141          | Խորխի բակտերիոլոգիական հետազոտություն                                                                           | ՀԵՏԱՁՆՏ.       | 1600                |                            |
| 0777142          | Խորխի բակտերիոլոգ. հետազոտ. դեղորայքային զգայունության որոշումով                                                | ՀԵՏԱՁՆՏ.       | 1900                |                            |
| 0777143          | Մանտուի փորձ, Տուբերկուլինոգիազնոստիկա (յուրաքանչյուր 1 հետազոտության համար)                                    | ՀԵՏԱՁՆՏ.       | 290                 |                            |
| 0777151          | Խորխի բակտերիոսկոպիկ հետազոտություն                                                                             | ՀԵՏԱՁՆՏ.       | 490                 |                            |
| 0777152          | Բակտերիոսկոպիկ հետազոտություն                                                                                   | ՀԵՏԱՁՆՏ.       | 490                 |                            |
| 0777160          | Բիոքիմիական հետազոտություն՝ 1 անձին առնվազն 3 բաղադրիչի որոշումով                                               | ՀԵՏԱՁՆՏ.       | 1050                |                            |
| 0777163          | Բիոքիմիական հետազոտ՝ 1 անձին մինչև 3 բաղադրիչի որոշման դեպքում յուրաքանչյուր բաղադրիչը                          | ՀԵՏԱՁՆՏ.       | 490                 |                            |
| 0777170          | Ֆունկցիոնալ հետազոտություններ (ֆունկարիոլոգրաֆիա, սպիրոգրաֆիա և այլն)                                           | ՀԵՏԱՁՆՏ.       | 1400                |                            |
| 0777171          | ԷԿԳ (գորակոչ, նախագորակոչ)                                                                                      | ՀԵՏԱՁՆՏ.       | 1400                |                            |
| 0777180          | Ֆիտոլոգիական հետազոտություն                                                                                     | ՀԵՏԱՁՆՏ.       | 1050                |                            |
| 0777200          | Ընդհանուր (կամ կլինիկական) հետազոտություններ՝ 1 անձին առնվազն 3 բաղադրիչի որոշումով                             | ՀԵՏԱՁՆՏ.       | 1050                |                            |
| 0777202          | Արյան ընդհանուր քննություն լեյկոֆորմուլայով                                                                     | ՀԵՏԱՁՆՏ.       | 1050                |                            |
| 0777203          | Արյան ընդի քննությ՝ առանց լեյկոֆորմուլայի՝ 1 անձին առնվազն 3 բաղադրիչի որոշումով (գորակոչ, նախագորակոչ)         | ՀԵՏԱՁՆՏ.       | 490                 |                            |
| 0777204          | Մեզի ընդհանուր քննություն (գորակոչ, նախագորակոչ)                                                                | ՀԵՏԱՁՆՏ.       | 490                 |                            |
| 0777205          | Ընդհանուր (կամ կլինիկական) հետազոտություններ՝ 1 անձին մինչև 3 բաղադրիչի որոշման դեպքում յուրաքանչյուր բաղադրիչը | ՀԵՏԱՁՆՏ.       | 490                 |                            |
| 0777206          | Արյան ընդի քննությ՝ առանց լեյկոֆորմուլայի՝ 1 անձին մինչև 3 բաղադրիչի որոշումով                                  | ՀԵՏԱՁՆՏ.       | 160                 |                            |
| 0777219          | Սոնոգրաֆիկ հետազոտություն (մեկ դեպքի արժեքը՝ անկախ տեղակայումների քանակից)                                      | ՀԵՏԱՁՆՏ.       | 3300                |                            |
| 0777220          | Պտղի սոնոգրաֆիա                                                                                                 | ՀԵՏԱՁՆՏ.       | 1750                |                            |
| 0777264          | Ռենտգենոգրաֆիա մեկ նկար (ժապավեն 35X43)                                                                         | ՀԵՏԱՁՆՏ.       | 3300                |                            |
| 0779000          | Անվճար և արտոնյալ պայմաններով դեղորայքի տրամադրում (ընտ.)մեծ.                                                   | ԴՐԱՄ           | 1                   |                            |
| <b>9</b>         | <b>ԲՈՒՄԱ, ՀՀ ԱՆ ԻՐԱՄԱՆՈՎ ԿԱՏԱՐՈՎՈՂ ԲՈՒԾՈՂՈՒԹՅՈՒՆ</b>                                                            |                |                     |                            |
| 211000           | 18 տարեկան և ավելի բարձր տարիքի անձանց ԱԱՊ-ի ԲՈՆՈՒՄ                                                             | ԴՐԱՄ           | 1                   |                            |
| 2112000          | Մինչև 18 տարեկան երեխաների ԱԱՊ-ի ԲՈՆՈՒՄ                                                                         | ԴՐԱՄ           | 1                   |                            |
| 2113000          | Դեռահասների ԱԱՊ-ի ԲՈՆՈՒՄ                                                                                        | ԴՐԱՄ           | 1                   |                            |
| 3102000          | ՀՀ ԱՆ ԻՐԱՄԱՆՈՎ ԿԱՏԱՐՈՎՈՂ ԲՈՒԾՈՂՈՒԹՅՈՒՆ                                                                          | ԴՐԱՄ           | 1                   |                            |
| 5222000          | ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՀԱՎՈՐՈՒՄ ԲՈՆՈՒՄ                                                           | ԴՐԱՄ           | 1                   |                            |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ԿԱՏԱՐՈՂ

ԱՆ գլխավոր քարտուղարի պարտականություններ կատարող՝  
Վահե Հակոբյան

Տնօրեն՝  
Աննա Հակոբյան

## Հ Ա Շ Վ Ա Ր Կ

2019 թվականի պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով  
Բժշկական օգնության և սպասարկման ծախսերի

Գեղակերտի ԲԱ ՀՈԱԿ  
(բուժօգնության անվճար)

(հազար ՀՀ դրամ)

| Բաժին,<br>խումբ, դաս,<br>ծրագիր | Բժշկական օգնության և սպասարկման ծրագրի անվանումը                                                                                                                                                 | Չափման<br>միավորը | Քանակ | 2019 թվականի<br>պայմանագրային<br>գումար |
|---------------------------------|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-------------------|-------|-----------------------------------------|
| Ա                               | Բ                                                                                                                                                                                                | 1                 | 2     | Տ                                       |
|                                 | ԸՆԴԱՄԵՆԸ-որից                                                                                                                                                                                    | X                 | X     | 43,220.8                                |
| 07.02                           | ԱՐՏԱՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, այդ թվում՝                                                                                                                                                   | X                 | X     | 43,220.8                                |
| 07.02.01                        | Ընդհանուր բնույթի բժշկական ծառայություններ, որից                                                                                                                                                 | X                 | X     | 43,220.8                                |
| 07.02.01.01                     | Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնության ծառայություններ, այդ թվում                                                                                                                          | X                 | X     | 43,220.8                                |
|                                 | 1 Առողջության առաջնային պահպանման ծառայություններ, այդ թվում                                                                                                                                     | X                 | X     | 35,361.4                                |
|                                 | 1.1 Մեծահասակների առողջության առաջնային պահպանում                                                                                                                                                | ազգաբնակչություն  | 4,112 | 16,678.3                                |
|                                 | 1.2 Երեխաների առողջության առաջնային պահպանում                                                                                                                                                    | ազգաբնակչություն  | 1,231 | 9,205.4                                 |
|                                 | 1.3 Բուժքույրերի կողմից իրականացվող բժշկական օգնություն ԲՄԿ-ներում                                                                                                                               | բուժքույր         | 6     | 7,119.0                                 |
|                                 | 1.4 Բուժքույրերի կողմից երեխաների բժշկական օգնություն և սպասարկում դպրոցներում                                                                                                                   | աշակերտ           | 705   | 1,502.4                                 |
|                                 | 1.5 Դիսպանսերային բժշկական օգնություն որից                                                                                                                                                       | X                 | X     | 0.0                                     |
|                                 | 1.5.1 Հոգենյարդաբանական                                                                                                                                                                          | ազգաբնակչություն  | 0     | 0.0                                     |
|                                 | 1.5.2 Հակատուբերկուլոզային                                                                                                                                                                       | ազգաբնակչություն  | 0     | 0.0                                     |
|                                 | 1.5.3 Ուռուցքաբանական (<< մարզերի համար)                                                                                                                                                         | ազգաբնակչություն  | 0     | 0.0                                     |
|                                 | 1.5.4 Մաշկավեներաբանական (<< մարզերի համար)                                                                                                                                                      | ազգաբնակչություն  | 0     | 0.0                                     |
|                                 | 1.5.4 Արյունաբանական                                                                                                                                                                             | ազգաբնակչություն  | 0     | 0.0                                     |
|                                 | 1.5.5 Նարկոլոգիական                                                                                                                                                                              | ազգաբնակչություն  | 0     | 0.0                                     |
|                                 | 1.5.7 Սպորտային բժշկություն                                                                                                                                                                      | X                 | X     | 0.0                                     |
|                                 | 1.5.8 << մարզերում դիսպանսեր ծառայությունների լաբորատոր-գործիքային հետազոտությունների համար (ներառյալ կցագրված տարածքի բնակչության համար իրականացվող)                                            | ազգաբնակչություն  | 0     | 0.0                                     |
|                                 | 1.6 Մանկաբարձագինեկոլոգիական ընդհանուր պրակտիկա, որից                                                                                                                                            | X                 | X     | 856.4                                   |
|                                 | 1.6.1 Մանկաբարձ-գինեկոլոգի կողմից իրականացվող (անմիջական սպասարկման տարածքի համար)                                                                                                               | ազգաբնակչություն  | 0     | 0.0                                     |
|                                 | 1.6.2 Մանկաբարձ-գինեկոլոգի կողմից իրականացվող (կցագրված տարածքի համար)                                                                                                                           | ազգաբնակչություն  | 0     | 0.0                                     |
|                                 | 1.6.3 Ընտանեկան բժշկի կողմից իրականացվող                                                                                                                                                         | ազգաբնակչություն  | 2,076 | 856.4                                   |
|                                 | 2 Ընտանեկան բժիշկների կողմից նեղ մասնագիտացված խորհրդատվության ուղեգրում                                                                                                                         | ազգաբնակչություն  | 5,343 | 2,288.8                                 |
|                                 | 3 Ընտանեկան բժիշկների կողմից լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների ուղեգրում                                                                                                         | ազգաբնակչություն  | 5,343 | 2,361.6                                 |
|                                 | 4 Անվճար և արտոնյալ պայմաններով տրամադրվող դեղեր                                                                                                                                                 | X                 | X     | 2,050.7                                 |
|                                 | 5 Հղիների հսկողություն                                                                                                                                                                           | X                 | X     | 435.2                                   |
|                                 | 6 Հղիների նախաձննդյան և հետձննդյան հսկողության ընթացքում, ինչպես նաև կանանց և 15 տարեկան աղջիկների առողջական վիճակի գնահատման նպատակով կատարվող լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններ | X                 | X     | 0.0                                     |
|                                 | 7 Զորակոչային և նախազորակոչային տարիքի անգանց արտահիվանդանոցային փորձաքննություն, այդ թվում                                                                                                      | X                 | X     | 0.0                                     |
|                                 | 7.1 Զինկոմիսարատներին կից բժշկական հանձնաժողովներ                                                                                                                                                | X                 | X     | 0.0                                     |
|                                 | 7.2 Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց հիվանդանոցային ուղեգրման ճանապարհածախս                                                                                                           | X                 | X     | 0.0                                     |
|                                 | 8 ԱԱՊ բժշկի գործունեությունը գնահատող ցուցանիշների կատարման դիմաց ֆինանսավորում                                                                                                                  | X                 | X     | 723.1                                   |
| 07.02.02                        | Մասնագիտացված բժշկական ծառայություններ, որից                                                                                                                                                     | X                 | X     | 0.0                                     |
| 07.02.02.01                     | Մտավոր, հոգեկան (վարքագծային), լսողական, ֆիզիկական (շարժողական) և զարգացման այլ խանգարումներով երեխաների գնահատման և վերականգնողական բուժման ծառայություններ                                     | X                 | X     | 0.0                                     |
| 07.02.02.02                     | Հեմոդիալիզի և պերիտոնալ դիալիզի անցկացման ծառայություններ                                                                                                                                        | X                 | X     | 0.0                                     |
